

# Ժողովուրդ

149  
(2629)

20 հոկտեմբերի հինգշաբթի 2022  
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է ՄԱՍ 116



Օրվա իշխանության մշակած պլանի համաձայն՝ ըստ երեւոյթին, առաջիկայում Հայաստանում գործող երեք խոշոր բուհեր կփակվրվեն՝ ձեւավորելով մեկ ընդհանուր հաստատություն՝ Խաչատուր Աբովյանի անվան կրթական գիտությունների ինստիտուտը: Թեւեւ Բոյոսովի անվան օտար լեզուների պետական համալսարանի ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական անձնակազմը միասնական դիրքորոշմամբ դեմ են արտահայտվում, ավելին՝ դասադուլ ու բողոքի ակցիաներ են կազմակերպում՝ ընդդեմ միավորմանը (միավորմանը Նաեւ Ֆիզկուլտիկոստիտուտի ղեկավարն է դեմ արտահայտվում), բայց փորձը ցույց է տալիս, որ եթե իշխանությունը մտքին մի բան է դրել, ապա այն անպայման իրագործելու է:

«Ժողովուրդ» օրաթերթը վերհիշել է՝ ինչպես էր տարիներ առաջ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը խոսում բուհերի ինքնավարությունից ու ազատությունից: Այդ մասին անգամ 2018-ի խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ իրապարակված նախընտրական ծրագրի մեջ է ամրագրված, այն է՝ «Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու հատկապես համալսարանների կրթական ծրագրերի արդիականացմանը եւ բուհերը գիտության ու նորարարության կենտրոն դարձնելուն, որտեղ կկարեւորվի բուհի ինքնավարությունը, ակադեմիական ազատությունները եւ բուհի՝ հասարակական եւ գիտական արժեք ստեղծելու մանդատը»:

Ի՞նչ է ստացվում. Փաշինյանի իշխանությունը բուհի ինքնավարությունը կամ ազատությունն այն օպտիմալացնելով է պատկերացնում, ու փոխանակ տարիների փորձ ու պատմություն ունեցող հաստատությունները փորձեն արդիականացնել ու միջազգային նորմերին համապատասխանեցնել, որոշում են միանգամից կտրել-միացնել դրանք: Փաշինյանը, բուհերի ինքնավարության մասին հայտարարություններով, փաստորեն, նորից ստել է:

Արցախցիները տարակուսած են՝ ինչ էլ ի վերջո լինելու Արցախի ճակատագիրը, ու ինչ կարգավիճակ է ունենալու Արցախը հետայսու: Հայկական երկրորդ հանրապետության պաշտոնյաների ու, առիասարակ, բնակիչների մտորումներն ու անհանգստությունն էլ ավելի են ահագնացել այն բանից հետո, երբ այստեղ՝ Երեւանում, վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել են Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորած պավիրակությանն ու ասել՝ Հայաստանն Արցախի անվտանգության բանակցություններին ի՞նչ է անում: «Փաշինյանը, կարելի է ասել, Արցախից Երեւան եկած պատվիրակությանն ասել է մոտավորապես այն, ինչ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանն էր հայտարարել, այն է՝ «44-օրյա պատերազմի հետեւանքով ՀՀ-ն այլեւս չունի հնարավորություն եւ ռեսուրս՝ ապահովելու Արցախի ժողովրդի իրավունքները»: Հետեւաբար՝ հասկացրել է՝ գլխներիդ ճարն ինքներդ տեսեք»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց հանդիպման մանրամասներին տեղյակ մեր զրուցակիցը: Հանդիպումից հետո՝ այժմ, Արցախում խիստ տարակուսած են. ի՞նչ անել, հատկապես որ իրենք էլ այս պահին չգիտեն՝ ում դիմել, ինչ անել՝ պահպանելու Արցախից մնացած մի բնակչոթը հատվածը: Եվ, փաստորեն, իշխանությունն ու Նիկոլ Փաշինյանը, որ վստահեցնում էր, թե «Արցախը Հայաստան է, ու վերջ», այժմ ճիշտ հակառակն են պնդում, թե Արցախի համար այլեւս ոչինչ անել չեն կարող:



ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներսում անմխիթար վիճակ է. մեծ թվով բաժիններ մնացել են առանց ղեկավարի: Նախ՝ նկատենք՝ 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո այդ կառույցը ղեկավարում էր Տիգրան Խաչատրյանը, որն այժմ ֆինանսների նախարարն է, եւ նրանից հետո՝ 2020 թվականի նոյեմբերի 26-ից, այդ պաշտոնը զբաղեցնում է Վահան Քերոբյանը: Նրա նշանակումից հետո համակարգում դժգոհություններն ավելացել էին, եւ եղել են նաեւ մարդիկ, որոնք պարզապես հրաժարվել են աշխատել Քերոբյանի հետ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս պահի դրությամբ էկոնոմիկայի նախարարությունը չունի գլխավոր քարտուղար, նախարարի խորհրդակալ: Կառուցվածքային ստորաբաժանումներում ղեկավարներ չկան կամ էլ պաշտոնակատարներ են: Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային 22 վարչություններից 8-ը, իսկ նախարարությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների 11-ից երեքը չունեն ղեկավարներ: Այսպիսի պատկեր տիրում է այլ գերատեսչություններում եւս, երբ կան վարչություններ, սակայն ղեկավարներ՝ ոչ:



Սեպտեմբերի 13-ի՝ Ադրբեյջանի կողմից սանձազերծած պատերազմը որոշ ժամանակով պարալիզացրել է պետական կառավարման համակարգը: Որոշ գերատեսչություններ սեպտեմբերին պլանավորած գործերը սահմանված ժամանակին չեն ավարտել, եւ դրանց կատարումը անորոշ ժամանակով հետաձգվել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նման իրավիճակում հայտնվել է Հաշվեքննիչ պալատը: Մեզ հայտնի դարձավ, որ Հաշվեքննիչ պալատը պետք է հաշվեքննություն իրականացնել Կապանի քաղաքապետարանում եւ Գեղարքունիքի մարզպետարանում ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, սակայն դրանք հետաձգվել են: Ըստ Հաշվեքննիչ պալատի հիմնավորման՝ դրանք կատարվել են՝ հաշվեքննության իրականացումն անհնարին դարձնող անկանխատեսելի հանգամանքով պայմանավորված: Իսկ Կապանի քաղաքապետ Գեորգ Փարսյանը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադառնալով այս հարցին, ասաց. «Ենթադրում եմ սեպտեմբերի 13-ի հետ կապված է եղել: Տեղեկություն չունեմ, թե երբ է սկսվելու այդ հաշվեքննությունը»:



ԶՂԱԴԱՐՈՂ ԳՆԱԾ

# ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ

Սեղսեմբեր ամսվա սվյալներով Հայասանի Առևտրային Գաճառային Կազմակերպության 780 հազար ֆաղաֆաղի է այցելել, իսկ Հայասանից Առևտրային Գաճառային Կազմակերպություն ունեցող 740 հազար ֆաղաֆաղի է մեկնել: Այս դասին Հայասանում գտնվող Առևտրային Գաճառային Կազմակերպության անձնագիր ունեցող ֆաղաֆաղների թիվը մոտ 40 հազար է: Միգրացիոն ծառայության նախորդ 9 ամիսների սվյալները ցնցեալապես Կարեն Մարգարյանն է ներկայացնում հավելելով՝ Հայասանում հասկառու ծառայությունների մատուցման եւ առեւտրի ոլորտում 40 հազար ֆաղաֆաղու հաճվով լրացուցիչ դասանաչարկ է առաջ եկել:

«Մենք տեսնում ենք, որ այս պահին թե՛ տնտեսական ակտիվության աճ կա, թե՛ դրա հետ մեկտեղ գնաճի որոշակի տեմպեր կան՝ չնայած կենտրոնական բանկի զսպող քաղաքականությանը եւ դրամի զգալի արժեւորմանը»,- նշում է մեր գրուցակիցը:

Թե՛ն պետությունը գնաճը զսպելու համար որոշ քայլեր ձեռնարկում է, այնուամենայնիվ, որոշակի ապրանքախմբերի գները շարունակում են աճել, իսկ, սեպտեմբեր ամսվա տվյալներով, 9.9 տոկոս գնաճ է գրանցվել, ինչը, նախորդ ամսվա համեմատ, 0.6 տոկոսով է ավելի: «Սննդամթերքի շուկայում 13.7 տոկոս է կազմել գնաճը, այսինքն՝ այն երկնիշ թվով է արտահայտվել: Հագուստի, առողջապահության ոլորտում, տրանսպորտի ոլորտում նույնպես բավականին բարձր աճ է գրանցվել»,- մանրամասնում է Սարգսյանը:

Տնտեսագետի փոխանցմամբ՝ հետկոլիդյան ժամանակներից սկսած՝ օր օրի թանկացումներն ահագնանալ սկսել են հատկապես ռուս-ուկրաինական պատերազմից, այսինքն՝ այս տարվա գարնանից սկսած: Էներգետիկայի, արեւմտյան բուսայրուղի, հացահատիկի ու այլ ապրանքների մատակարարող՝ մեծամասամբ Ռուսաստանը, որոշ դեպքում նաեւ Ուկրաինան է: Այժմ, սակայն, մատակարարման այդ շղթան խաթարվել է, ինչն էլ համաշխարհային մակարդակով մեծ գնաճերի



է հանգեցրել: Սարգսյանի դիտարկմամբ՝ Հայաստանում օգոստոսին որոշ չափով գնանկում է եղել, բայց քանի որ առ այսօր գնաճի ճնշումները շարունակվում են, դա քաղաքացու համար շոշափելի չի եղել: «Գնաճի հիմնական պատճառն արտաքին շուկայի հետեւանքն է, ու այդքան պայմանավորված չէ տնտեսական զարգացումներով: Պետք է հասկանանք, որ ամբողջ աշխարհում է գնաճային բարձր ֆոնով, պայմանավորված իրավիճակ, որը թերեւս կպահպանվի անորոշ ժամանակով»,- հավելում է տնտեսագետ Սարգսյանը:

Եթե դրամի արժեւորումն այս չափի չլիներ, ապա, ներկայացում է տնտեսագետ Սարգսյանը, գնաճն արձանագրվածի կրկնակի չափով էր լինելու: Համեմատության համար ԵԱՏՄ անդամ մյուս երկրներն է օրինակ բերում ընդգծելով՝ գնաճը Ռուսաստանում՝ 14, Բելառուսում՝ 16, Ղազախստանում՝ 17 տոկոս է կազմել:

Կարեն Սարգսյանի հետ նաեւ փողոցի առեւտրի մասին զրուցեցինք: Նշենք, որ քաղաքացիներն այն արգելելու համար օրենսդրական փաթեթ է մշակել, ինչին կառավարությունը դրական եզրակացություն է տվել: Ու եթե խորհրդարանը վավերացնի այդ նախագիծը, ապա փողո-

ցում առեւտրը անելն օրենքով կարգելի: «Փողոցի առեւտրը մի կողմից իհարկե հաճելի երեւոյթ չէ, ու, իսկապես, վաղ թե ուշ այս խնդիրը պետք է արմատապես լուծվի, բայց, մյուս կողմից, պետք է հասկանանք, որ նմանատիպ գործունեություն իրականացնող անձինք լուծում են իրենց տարրական կարիքների խնդիրը: Հետաքար նախ պետք է լուծել այս մարդկանց՝ աշխատանքի տեղավորելու հարցերը, ապա որ նոր միայն ադմինիստրատիվ մեթոդներով արգելել փողոցի առեւտրը: Նշենք, որ աշխարհի բոլոր զարգացած երկրներում փողոցային առեւտրը եղել է եւ կմնա: Սանիտարահիգիենիկ առումով, այո, այդքան էլ ճիշտ չէ, օրինակ, միգրանտները կամ սնունդը փողոցում վաճառել, բայց հարցին չպետք է միակողմանի լուծում տալ,- բացատրում է Սարգսյանն ու հավելում:- Այս հիմնախնդիրն այն բանի վկայումն է, որ մեր երկրում առեւտրը ոչ ճիշտ են կազմակերպում, սակայն պատկան մարմինները պետք է հասկանան, որ այս խնդիրը հիմնականում կարիք ունի: Վարչական մեթոդներով փողոցի առեւտրն ուղղակի արգելելով՝ հարցը, միանշանակ, չի լուծվել»:

ՄԵՎԿ ՎԱՐՊՈՍՅԱՆ



## ՀՐԱՏԱՊ ԳԻՄՈՒՄ



ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հակառակից հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Հրատապ դիմել եմ միջազգային գործընկերներին՝ իրականացնելու Ադրբեջանի հնարավոր հարձակումը կանխարգելող գործունակ ջախջախները»:

Վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանին, մասնավորապես՝ Վարդենիսի ուղղությամբ Ադրբեջանի կողմից իրադրության լարումը վկայում է Ադրբեջանի հնարավոր նոր հարձակման վտանգների մասին: ՀՀ պաշտպանության նախարարությունը տարածեց հաղորդագրություն, որ Ադրբեջանի ՋՌԻ-ի կողմից իրականացվել է լրացուցիչ ուժերի եւ միջոցների տեղաշարժ ու բացազատում, որն առաջացրել է որոշակի լարվածություն:

Ադրբեջանական կողմը շարունակաբար տարածում է նաեւ ապատեղեկատվություն հայկական կողմի կրակ բացելու վերաբերյալ՝ հնարավոր է փորձելով հիմքեր ստեղծել իրենց առաջիկա հնարավոր հարձակման համար:

Գնահատելով իրավիճակի լրջությունը եւ իրադրության ապակայունացման հնարավոր նոր ռիսկերը՝ իրատապ նախագահ Թովմասյանը միջազգային գործընկերներին՝ ներկայացնելով իրավիճակի լրջությունը, ռիսկերը, եւ խնդրել ձեռնարկել գործնական քայլեր՝ կանխելու Հայաստանի դեմ Ադրբեջանի նոր ռազմական ագրեսիան:

Երեկ ԱՄՆ կոնգրեսականների հետ հանդիպման ժամանակ կիսվեցին այս ահագնագի, ինչպես նաեւ մի շարք այլ իրատապ հարցերի վերաբերյալ, եւ նրանց հետ ունեցած զրույցում հնչեցրի «SOS» այն կապակցությամբ, որ Ադրբեջանը մտադիր է իրականացնել նոր ագրեսիան»:

## ՀԱՐՑԱՔՆԵՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայությունը հարցաքննել է ԱԾՏ նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի դատավոր դատերը՝ Անի Հարությունյանին: Նկատելի է, որ Անի Հարությունյանը դատական դեպարտամենտի նախկին ղեկավար Կարեն Փղադյանի եղբոր՝ Սևակոյանի դատարանի դատավոր Տիգրան Փղադյանի կինն է: Հիշեցնենք, որ 2022 թվականի հոկտեմբերի 12-ին գլխավոր դատախազի տեղակալի կողմից որոշում է կայացվել դատավոր Ա.Հ.-ի նկատմամբ հարուցել հակառակից քրեական հետապնդում՝ ՀՀ դատական իշխանության մարմնի պաշտոնատար անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված, առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման օժանդակելու, ինչպես նաեւ դատավոր Ա.Հ.-ի կողմից նույն չափերով գույքի չհայտարարագրմամբ զուգորդված հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու համար:

ՄԵՎԿ ՎԱՐՊՈՍՅԱՆ

1 ՏԱՐԻ ԱՆՑ

# ԱՆԽԱՏԵԼ ԵՆ ԶՐԱՏԱՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՎ

Վանաձորում 2021-ի դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած ընտրություններից հետո՝ մինչև օրս, ֆաղաֆաղան իշխանությունը՝ «Քաղաքացիական դաշինության» ղեկավարը՝ ընտրության արդյունքների հետ, ամեն բան անում է, որ այստեղ լիարժեք իշխանություն այդպես էլ չձեւավորվի: Թե՛ն «Մամիկոն Ասլանյան» դաշինքի համայնադրեթի թեկնածու, Վանաձորի նախկին ֆաղաֆաղե Ասլանյանն այս դասին կալանավորված է, (ինչն, ի դեպ, որդես ֆաղաֆաղան հեռադուրում է որակվում), Վանաձորն էլ համայնքի ղեկավարի դարակառուցությունները կատարող ունի, ամեն դեպքում, Հայասանի մեծությամբ երկրորդ ֆաղաֆը հաստատված բյուջե չունի: Բացի այդ, ԲԳ-ակաճներին չի հաջողվում ճնշումներ բանեցնելու միջոցով համոզել ավագանու մեկ-երկու անդամի, որ բավարար ձայներ առաջադրեն, ու իրենց ցանկալի թեկնածուն ֆաղաֆաղե ընտրվի: Նե՛նք, որ ձայների հարաբերակցությունն այստեղ 17/16 է՝ հոգու Մամիկոն Ասլանյանի:

Ընտրություններից հետո ավագանու մի քանի (2-3) նիստ է ընդամենը իրավիճակ, բայց դրանք բոլորն էլ տեղի չեն ունեցել: Չնայած այդ հանգամանքին՝ կառավարությունն այստեղ համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող է նշանակել նախկինում քրեական գործերով անցնող Արկարի Փելեշյանին, որ, ըստ մեղադրանքի, Հայ Ավետարանական եկեղեցու հովիտի էր ծեծել իր իսկ աշխատասենյակում:

Ու քանի դեռ Ասլանյանը շարունակում է կալանքի տակ մնալ, պաշտոնային աթոռին, ըստ երեւոյթին, բավական հարմար տեղավորված Փելեշյանը շարունակում է կառավարել քաղաքը: Բայց թե ինչպես է դա հաջողվում, երբ քաղաքը հաստատված բյուջե չունի, դա թերեւս բոլորի համար շարունակում է անհասկանալի մնալ:

Իրավաբան Արսեն Բաբայանի հիմնավորմամբ՝ համայնքային բյուջեն հաստատում է ավագանին, իսկ ընթացիկ տարվա բյուջեն ավագանու կողմից հաստատված չլինելու դեպքում տվյալ տարվա համար հաստատված է համարվում նույն համայնքի նախորդ տարվա բյուջեն: «Սրա տրամաբանության հիմքում ընկած է այն ար-

դարացի մոտեցումը, որ նույն համայնքն է, նույն եկամուտներով է նույն ծախսերով, ուստի հնարավոր է որպես ծայրահեղ միջոց կիրառել նախորդ փորձը,- մանրամասնում է Բաբայանն ու ավելացնում:- Օրենքի այս պահանջից ելնելով՝ Վանաձորի համար ընթացիկ տարվա բյուջեն չի կարող նախորդ տարվա համամասնությամբ հաստատված համարվել, քանի որ նախորդ տարում Վանաձոր խոշորացված համայնք գոյություն չի ունեցել: Վանաձորում նախորդ տարի կատարվել է համայնքի խոշորացում, միացվել են այլ համայնքներ, եւ այդպիսով ստեղծվել է լրիվ նոր խոշորացված համայնք, որն էլ, բնականաբար, ենթադրում է նոր եկամուտներ եւ նոր ծախսեր»:

Ի՛նչ է ստացվում. Վանաձորը մոտ մեկ տարի առաջ ավագանի է ընտրել, ինչն էլ պետք է քաղաքային իշխանություն ձեւավորեր, բայց հանրապետության երրորդ քաղաքն առ այս պահը ղեկավարում է մի մարդ, որին Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը տարիներ առաջ ամենատարբեր բնորոշումներն էր տալիս:

ՄԵՎԿ ՎԱՐՊՈՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ ԶԵՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ՀԱՐՑԱՔԵՆՎՈՒՄ ԵՆ

«ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե ինչու հենց Ազգային անվտանգության ծառայությունը, այլ ոչ թե Հակակոռուպցիոն կոմիտեն որոշեց քննել Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի եւ փաստաբան Էրիկ Ալեքսանյանի գործը: Ինչպիսիք այն է, որ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը նախկինում եղել է ՀԶԾ-ի, այսինքն՝ ներկայիս Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ: Եվ, ահա, համակարգում այն տեսակետն է հնչել, թե կարող է շահերի բախում լինել, ուստի պետք է, որ Արուսյակ Ալեքսանյանի եւ Էրիկ Ալեքսանյանի գործը քննի ԱԾՄ-ն: Մեկ այլ հանգամանք էս. օրերս իրավապահների ուշադրության կենտրոնում էր հայտնվել նաեւ ԱԾՄ նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի դատավոր դուստրը՝ Անի Հարությունյանը: Իրավապահ համակարգը միայն նրանցով չէ գբադված, եւ հարցաքննվում են նաեւ գրասենյակների աշխատողները, փոխկապակցված անձինք, իսկ Արուսյակ Ալեքսանյանի օգնականին անգամ ձերբակալել են: Հավելեց, որ Ալեքսանյանն այն դատավորն է, որը քաղաքական հրահանգի արդյունքում մեղադրյալի աթոռին հայտնված տարբեր անձանց մասով տալիս էր կալանքի որոշումներ: Ալեքսանյանը Մամիկոն Ավանյանին, Ավետիք Զալաբյանին կալանքի տարած, այս գործերով հայտնի դատավորն է:

ՄԱՔՍԱՅԻՆ ԿՑՈՐԴ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ, ՀՀ կառավարության որոշմամբ, Վահան Հակոբյանը կնշանակվի Ռուսաստանի Ռազմաբազային Ռազմաօդային զորքերի Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից մաքսային կցորդի 3 տարի ժամկետով: Մինչ այդ մաքսային կցորդը Արամ Թանայանն էր, որը պաշտոնից ազատվեց հունիս ամսին: ArmLur.am-ը գրել էր, որ Արամ Թանայանը Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից մաքսային կցորդի պաշտոնից ազատվեց մեկ տարի շուտ, քանի որ նա այս պաշտոնին նշանակվել էր 2020 թվականին 3 տարի ժամկետով: Թե ինչն էր Թանայանին ժամկետից շուտ աշխատանքից ազատելու պատճառը, այդպես էլ անհայտ մնաց: Նշենք, որ 2020 թվականի հունվարի 30-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Թանայանին նշանակելով այս պաշտոնին, հայտարարել էր, որ այդ մաքսային կցորդը պետք է աշխատի Վերին Լարսի անցակետի մոտակայքում:

ՀԵՏՄԱՀՈՒ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Աժ նախագահ Ալեն Սիմոնյանը հետմահու պարգևատրելու որոշում է ստորագրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, Սիմոնյանի որոշմամբ, հետմահու Աժ նախագահի հուշամեդալով է պարգևատրվել երգիչ, երգահան Հայկոն՝ Հայկ Հակոբյանը: Նշենք, որ երգիչը նախորդ տարի՝ 2021-ին էր մահացել 48 տարեկանում:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Այսուհետ Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը հնարավորություն կունենա թաքցված աշխատուժի բացահայտմանն ուղղված ստուգումներն իրականացնել առանց նախապես եռօրյա ժամկետի ծանուցման պահանջը պահելու: Համեմայնեցյալ, այդպիսի նախագիծ քննարկվել է այսօր Աժ տնտեսական հարցերի հանձնաժողովում, եւ հաջորդ շաբաթ պետք է քննարկվի նաեւ լիազորմար նիստի ժամանակ: Այսինքն՝ այն բացառությունները, որոնք կան տեսչական որոշ մարմինների համար՝ ստուգումներն իրականացնել առանց եռօրյա ծանուցման ժամկետը պահելու, նույն կարգավորումն առաջարկվում է տարածել աշխատանքային օրենսդրության նկատմամբ հսկողություն իրականացնող այդ մարմնի նկատմամբ:

Հայաստանը համագործակցում էր Կրակի Pinaka կոչվող ռեակտիվ համակարգերի երեք մոդել է դասվիթել, որոնք Գեյլից Երեւան դեմք է սեղանի վրային առաջիկա երկու տարում: Այդ մասին հայտնել է հրթիռների արտադրությամբ զբաղվող խոշոր ընկերության՝ Solar Industries-ի ղեկավար Մասյանառայան Նուվալը Հնդկաստանում բացված DEFEXPO ցուցահանդեսի ժամանակ: «Մենք Pinaka-ի, ընդլայնված հեռահարության Pinaka-ի եւ կառավարվող Pinaka-ի արտահանման դասվեր ենք ստացել Հայաստանից: Ըստ վերջնաժամկետի՝ դեմք է այդ երեքն էլ ավարտենք երկու տարում», - ասել է ռազմարդյունաբերությամբ զբաղվող ընկերության ղեկավարը:

Նկատելով, որ հնդկական զենքի այս խոշոր ցուցահանդեսին ներկա է եղել նաեւ Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը: Նա երեկ հանդիպել է իր Հնդկաստանի գործընկերոջ հետ: Հանդիպումից հետո նախարար Ռաջնաթ Սինգը «Թվիթեր»-ում գրել էր՝ շփումը հրաշալի է անցել, սակայն առանց հավելյալ մանրամասների:

Հայկական կողմը եւս մանրամասներ չէր հաղորդել, պաշտոնական հաղորդագրությամբ միայն նշվել էր, թե «քննարկվել են համագործակցության ընդլայնման հնարավորությունները, երկու կողմ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության մի շարք հարցեր»: Հանդիպման ավարտին Սուրեն Պապիկյանն իր գործընկերոջը պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան:

Հնդկական մամուլը, սակայն, հղում անելով իր աղբյուրներին, այլ մանրամասներ է հայտնում եւ պնդում է, թե ռազմատեխնիկական համագործակցությունը կարող է ընդարձակվել՝ նոր սպառազինությունների ձեռքբերման հաշվին:

The Print պարբերականը, մասնավորապես, պնդում է, թե Հայաստանն այժմ հետաքրքրված է հատկապես հնդկական արտադրության Akash հակաօդային պաշտպանության համակարգով եւ հարվածային անօդաչու թռչող սարքերով:

Ավելի վաղ էլ՝ անցած ամիս, հնդկական մամուլը հաղորդել էր, թե կողմերը մոտ 250 միլիոն դոլարի գործարք են կնքել, որով Հնդկաստանը պետք է առաջիկա



կա ամիսներին հայկական բանակին հակատակային հրթիռներ, ինչպես նաեւ համագործակցության կրակի ռեակտիվ համակարգեր՝ Pinaka-ներ մատակարարի:

Բաց աղբյուրներում առկա տեղեկությունների համաձայն՝ այդ համակարգերը հնդկական բանակի զինանոցում են հայտնվել 2000-ականների սկզբին՝ փոխարինելով խորհրդային արտադրության ռեակտիվ հրետանային միջոցները, մասնավորաբար՝ «Գրադ» կայանները:

Հնդկական աղբյուրների փոխանցմամբ՝ Հայաստանին վաճառված ռեակտիվ համակարգերից մեկի հեռահարությունը հասնում է 37,5 մյուսինը՝ 45, երրորդինը՝ 75 կիլոմետրի: Վերջին տարբերակը համարվում է երեքից ամենաառաջադեմը, ունի ներքին լամպագիծն համակարգ, արբանյակային լամպագիծն ուղեցույց, ինչը հնարավորություն է տա-

լիս խոցել հակառակորդին մեծ հեռավորության վրա: Ըստ հնդկական աղբյուրների՝ այդ համակարգերից յուրաքանչյուրն ի վիճակի է 44 վայրկյանում 12 հրթիռ արձակել, որոնք նախատեսված են հակառակորդի անձնակազմը, ծանր տեխնիկան, ինչպես նաեւ հրամանատարական կետերը խոցելու համար:

Ուշագրավ է, սակայն, որ Հայաստանի պաշտպանության նախարարությունն այս գործարքների մասին տեղեկություններն առաջիմ չի հերքել, բայց եւ չի հաստատել: Ընդ որում, եթե համագործակցությունը հաստատվի, Հայաստանը կդառնա օտարերկրյա առաջին պետությունը, որն իր բանակը որոշել է համալրել հնդկական այս զինատեսակով: Այս հանգամանքը եւս շեշտվել է հնդկական պարբերականի հոդվածում:

ՆԱԻՐԱ ՅՈՎԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ

Նիկոլ Փաշինյանի որոշումներով լուծարված Հատուկ քննչական ծառայությունում Սասուն Խաչատրյանի տեղակալները, որոնք Հակակոռուպցիոն կոմիտեում տեղակալների պաշտոնակատարներ էին, նշանակվել են տեղակալներ:

Ստորագրված որոշումներում ասվում է. «Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 15-րդ մասով եւ 20-րդ հոդվածի 1-ին մասով՝ Մուշեղ Բաբայանին նշանակել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ՝ ազատելով նրան Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնակատարի պաշտոնից:

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 15-րդ մասով եւ 20-րդ հոդվածի 1-ին մասով՝ Էդիկ Հակոբյանին նշանակել Հա-

կակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ՝ ազատելով նրան Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնակատարի պաշտոնից»:

ԵՌՕՐՅԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԿՄԵԿՆԵՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը հոկտեմբերի 19-22-ը կգործուղվի Ֆրանսիայի Հանրապետություն (Լիոն): Այս մասին որոշում է ստորագրել վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ղուկասյանը մեկնում է Լիոն Օվերնյոն-Ալպ շրջանի հետ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով: Ֆրանսիա կմեկնի նաեւ մարզպետի օգնականը՝ Սուրեն Քեսեջյանը: Վերադառնալուց հետո եռօրյա

ժամկետում Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին հաշվետվություն պետք է ներկայացվի վարչապետի աշխատակազմ եւ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Հոկտեմբերի 20-21-ը Երեւանում տեղի կունենա Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը, ինչի կապակցությամբ Հայաստան կժամանեն ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները:

Նեղ եւ ընդլայնված կազմերով նիստերում կքննարկվեն Եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը վերաբերող օրակարգային հարցեր:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՂԱՏԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՎ

ՈՎԻԴԵՐ ԿՐԱՐՑԱՔՆՆՎԵՆ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կարանավորված դասավոր Մուսայակ Ալեքսանյանի և փաստաբան Էրիկ Ալեքսանյանի գործով Ազգային անվագություն ծառայությունը հարցաքննության է հրավիրելու Բեալկան հեղինակություն, Ֆազ մականունով հայտնի Սերգեյ Գրիգորյանին և եւս այլ փաստաբանների:



Իսկ ինչու: 2022 թվականի օգոստոսի 22-ին քրեական անցյալ ունեցող անձանց «նազբորկա» և ծեծկոտուք է տեղի ունեցել Երեւանի կենտրոնում: Shamshtyan.com-ը հայտնել էր, որ Երեւանի ընդհանուր իրավասության Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանում տեղի էր ունենում դատական նիստ, որը նախագահում էր դատավոր Զոն Հայրապետյանը:

Դատարանի բակում էին հավաքված եղել ամբաստանյալներ Գրիգոր Գրիգորյանի և Գրիգոր Պետրոսյանի ընկերներն ու համակիները, որոնց մեջ է եղել քրեական աշխարհում հայտնի, Ֆազ մականվամբ Արթուր Գրիգորյանը: Երբ փողոցով անցնելիս է եղել մեկ այլ քրեական պատմություններով հայտնի Ռուստամ Ստեփանյանը, որը հանրությանն ավելի շատ հայտնի է Չաղ Ռուստամ մականվամբ, միմյանց հասցեին հնչել են փոխադարձ մեղադրանքներ դատարանի բակում, որը հետո վերածվել է ծեծկոտուքի:

Օպերատիվորեն ժամանել են ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի, ոստիկանության էրեբունու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, որոնք կարողացել են մի քանի հոգու վնասազերծել և տեղափոխել ոստիկանության էրեբունու բաժնի, ապա, Երեւանի ոստիկանապետի կարգադրությամբ, ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երեւանի գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի գլխավորությամբ դատարանի բակից մի քանի ավտոմեքենաներ տեղափոխել են ոստիկանության էրեբունու բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Կան վարչության էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Մի քանի անձինք, որոնք դիմել են փախուստի, ոստիկանների կողմից փնտրվել են և ներկայացվել են դատարան, որպեսզի նրանց կալանավորեն: Ահա այստեղ էլ սկսվել է «կռիվ կինոն»: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ դատավոր Ալեքսանյանը քրեական հեղինակության մասով կայացրել է այնպիսի ակտ, որով նրան ազատ են արձակել 2,5 միլիոն գրավի դիմաց, ինչը իրավապահ համակարգում համարում են պաշտոնական լիազորությունների չարաշահում: Քրեական հեղինակության ազատ արձակման միջնորդություն էլ ներկայացրած է եղել փաստաբան Էրիկ Ալեքսանյանը, ինչի համար իրավապահ համակարգը դատավորին ու փաստաբանին մեղադրանք է առաջադրել և տանում է կալանքի: Ինչով կավարտվի այս պատմությունը՝ կիմասանք՝ հետետեղով զարգացումներին:

Նշենք, որ Արուսյակ Ալեքսանյանին կալանավորելու միջնորդությունը քննում էր Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակ 1 նստավայրի դատավոր Ռազմիկ Մարիկյանը: Փաստաբանի պաշտպանների պնդմամբ՝ Էրիկ Ալեքսանյանն ընդամենը կատարել է իր

մասնագիտական պարտականությունն ու միջնորդություն ներկայացրել դատարան: Էրիկ Ալեքսանյանին կալանավորելու միջնորդությունը քննած դատավորը դեռևս որոշում չի հրապարակել: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաև դատավոր Արուսյակ Ալեքսանյանի օգնականը: Ըստ լուրերի՝ ԱԼԾ-Ն ձեռքբերվել է նաև կալանավորված դատավորի օգնականին: Իսկ թե ինչու, կներկայացնենք մի փոքր ուշ:

Ի դեպ, նկատենք, որ քիչ առաջ անգամ ահագանգ հնչեցրեց դատավորների միությունը՝ հայտնելով. «ՀՀ դատավորների միությունը հետևում է վերջին օրերին դատավորների նկատմամբ քրեական հետապնդման հարուցմանը նախորդած ու ընթացիկ գործընթացներին: Ապացույցների ձեռք բերման գործընթացում կամ վարույթի շրջանակում նվազ մտահոգիչ չեն նաև դատական ծառայողների (օգնական, գործավար) նկատմամբ կիրառվող հետապնդումներն ու հարկադրանքի միջոցները: Օրինակականության պահպանման հորդորով, հետետեղով հետագա զարգացումներին, անհրաժեշտության դեպքում հանդես կգանք համապատասխան հայտարարությամբ»:

ՔՆՆՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԳՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԳՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Նվեր Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիվ պատերազմի ընթացքում հայտարարված ռազմական դրության պայմաններում հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող, եւ ենթակա անձնակազմի նկատմամբ հանդիսանալով պետ, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետեւանքով չի կատարել դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ:

ԻՆՉ Է ՄՊԱՍՎՈՒՄ

ArmLur.am-ի հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն առաջիկայում նախաքննության ավարտ կհայտարարի Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանի քրեական գործով:

Հիշեցնենք, որ դատարանը, դատավոր Ռալիթ Արզումանյանի գլխավորությամբ, բավարարել էր Հակակոռուպցիոն կոմիտեի միջնորդությունը, եւ դատախազ Կորյուն Ներսիսյանի կալանքը եւս երկու ամսով երկարաձգվել էր:

Ինչպես հայտնի է, Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանը կալանավորվել էր: Դատախազ Կորյուն Ներսիսյանը կաթողիկոս Գարեգին Բ-ի եղբորորդին է, որի քրեական գործով շրջափվում է նաև Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Էդգար Հովհաննիսյանի և Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Աղամյանի անունները:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ.Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն.Բ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելու պաշտոնական դիրքն օգտագործելով նպաստելու համար Գ.Գ.-ի և Ն.Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն.Բ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք: Կորյուն Ներսիսյանը չի ընդունում մեղադրանքը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է ԻՆՔՆԱԿԱՄ

Հոկտեմբերի 15-ին՝ կեսգիշերն անց, «Արմվյան» բժշկական կենտրոնից ահագանգ էր ստացվել ոստիկանության Կոտայքի բաժնի, որ բուժօգնության է դիմել Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղի բնակիչ, 26-ամյա մի տղամարդ: Նրան դանակահարել էին: Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության եւ բաժնի ծառայողների համատեղ ջանքերով կարճ ժամանակում պարզվեց, որ Մայակովսկի գյուղում տեղի էր ունեցել կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն:

առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել: Հանցագործության գործիք դանակը հայտնաբերվել է: Նախաքննությունը շարունակվում է:

ԱՋԱՏ ԱՐՉԱԿՎԵՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ 3 տարի կալանքի տակ գտնվող նախարարի տեղակալ Գեորգ Լոռեցյանն ազատ արձակվեց:

Հիշեցնենք, որ, ըստ ԱԼԾ-ի տարածած հաղորդագրության, ԿԳՄՍ նախարարի տեղակալը, նախարարության ենթակա հիմնարկների կարիքների համար մարգագույքի եւ մարգահագուստի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթներում աջակցություն ցուցաբերելով վերոնշյալ տնտեսվարողին, դրա դիմաց վարորդի օժանդակությամբ պայմանավորվածություն է ձեռք բերել ստանալ առանձնապես խոշոր չափերով կաշառք գումար: Տնտեսվարողի կողմից գումարի մի մասը

Այդ ընթացքում տղամարդուն դանակով խփել էր Արմվյան քաղաքի 24-ամյա մի բնակիչ: Բացատրական աշխատանքի արդյունքում նա դեպքի հաջորդ օրը եկել է Կոտայքի բաժնի և հայտնել, որ 26-ամյա երիտասարդին ինքն է դանակահարել: Նա ձերբակալվել է ներկայացվել է Արմվյանի քննչական բաժնի, որտեղ դեպքի

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ

2018 թվականի ապրիլին հռչակում կայացած բազմամարդ հանրահավաքում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ նոր Հայաստանում ԽԾԲ-ով պաշտոնների չեն նշանակվի, սակայն նրա վարչապետ դառնալուց հետո նրա դասընկերները, մանկության ընկերները, հարազատները մեծ պաշտոններ ստացան: 2019թ. սեպտեմբերի 5-ին հրաժարական տվեց 2011-ից հռչակում համայնքը ղեկավարած Վարդան Ղալումյանը, սեպտեմբերի 12-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ հռչակում համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվեց նրա մանկության ընկեր, նրա հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանը: Վերջինս 2021 թվականի ապրիլի 8-ին Նիկոլ Փաշինյանի կողմից նշանակվեց Տավուշի մարզպետ: Մարզպետ Հայկ Ղալումյանը 2022թ. օգոստոսի 8-ին իր ընկեր, հասակակից Յուրա Բազինյանին նշանակել է Տավուշի մարզպետի օգնական: Ներկայացնում են Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրված, Յուրա Բազինյանի ինքնակենսագրականում առկա նրա աշխատանքային գործունեության մասին բոլոր տվյալները.

- 2008 - 2015թթ. - «Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ հռչակումի մասնաճյուղ, ոսկերիչ-փորձագետ,
- 2016-2022թթ.- «Կոնվերս բանկ» ՓԲԸ հռչակումի մասնաճյուղ, մասնագետ-գնահատող:
- 2008-2010թթ.-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «հռչակում» մասնաճյուղ, կառավարչի տեղակալ, վարկ-ավանդային բաժնի պետ,
- 2010-2019 թվականներին՝ «Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ հռչակումի մասնաճյուղի կառավարիչ:

Կարո՞ղ է Տավուշի մարզպետարանում ոսկի են գնահատում, որ մարզպետը ոսկերիչ-գնահատողին իր օգնականի պաշտոնն է տվել:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

Բերդ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, 2021թ. նոյեմբերից համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար աշխատած, 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ համայնքի ավագանու ընտրություններում հաղթած «Զորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 2-րդ համար Սամվել Հովսեփյանը հոկտեմբերի 2-ին Տավուշի մարզի առաջին աստիճանի դատարանի որոշմամբ 2 ամիս ժամկետով կալանավորվել է: Նա մեղադրվում է Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրի մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին քարոզչության հարկադրելու համար: Ս. Հովսեփյանը կալանավորվելուց հետո, որպես բողոքի գործողություն, հացադուլ է հայտարարել, որը դադարեցրել է հոկտեմբերի 7-ին: Ս. Հովսեփյանի պաշտպան, փաստաբան Գոռ Սաղոյանը հայտնեց, որ ինքն անցած շաբաթ Ս. Հովսեփյանի կալանավորվելու դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: Բողոքի քննության օրը դեռևս նշանակված չէ:

ՈՍՎԻՆ ՍՈՐՈՍՅԱՆ Տավուշ

ՈՒՆԵՑՎԱԾՔ

ԴԱՏԱՎՈՐԸ՝ ԻՐԱՎԱՊԱՐՆԵՐԻ ՏԵՄԱԴԱՇՏՈՒՄ

Երեկ հայտնի դարձավ, որ Երևանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արուսյակ Ալեքսանյանի նկատմամբ քրեական հետադիմում է իրականացվելու: Նշենք, որ իրավադաշնի Տեսադաշտում է հայտնվել ոչ միայն մինչդասական վարույթի գործով դատավոր Արուսյակ Ալեքսանյանը, այլև փաստաբան Էրիկ Ալեքսանյանը: ArmLur.am-ը գրել էր, որ իրավադաշնի համակարգը կասկածներ է ունեցել կոռուպցիոն հնարավոր գործարհների մասով, որոնք կաղված են կոնկրետ քրեական գործի հետ: Ի դեպ, խոսքը այն դատավորի մասին է, ում որոշմամբ մայիսի 18-ին որոշյալներ Արմեն Գրիգորյանը զրկվեց ազատությունից:



Բացի այս, Արուսյակ Ալեքսանյանը քաղաքական հրահանգի արդյունքում մեղադրյալի աթոռին հայտնված տարբեր անձանց մասով տալիս էր կալանքի որոշում: Ալեքսանյանը Մամիկոն Ասլանյանին, Ավետիք Չալաբյանին կալանքի տարած դատավորն է:

Իսկ մինչ այդ ArmLur.am-ը ուսումնասիրել է, թե ինչ ունեցվածք ունի իրավապահների տեսադաշտում հայտնված դատավոր Արուսյակ Ալեքսանյանը: Սկսենք 2017 թվականից, երբ նրա դրամական միջոցը կազմել է 15 մլն դրամ: Այդ տարի նա ստացել է ամսական 296 հազար դրամ աշխատավարձ: Նշենք, որ այդ ժամանակահատվածում նա զբաղեցրել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչի պաշտոնը: Մեկ տարի անց՝ 2018 թվականին, դատավոր Ալեքսանյանը 1 մլն դրամով գնել է Mercedes Benz մակնիշի ավտոմեքենա: Ունեցել է 1 մլն դրամ գումար: Երկու վայրից ստացել է աշխատավարձ, որը ամսական կազմել է 430 հազար դրամ:

2019 թվականին Ալեքսանյանը զբաղեցրել է ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության հատկապես կարելու գործերի քննիչի պաշտոնը: Այդ ժամանակահատվածի հայտարարագրում նա նշել է, որ ունի հողամաս,

որը ձեռք է բերել 2017 թվականին Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում: Բանկային հաշվին առկա մնացորդը կազմել է 17 հազար դրամ, կանխիկ գումարը՝ 10 մլն դրամ, ամսական աշխատավարձը՝ 519 հազար դրամ: Բացի այս, նա ՀՀ առևտրային բանկերից փոխառություններ, վարկեր է ստացել՝ ընդհանուր 9 մլն 721 հազար դրամի չափով:

Շատ 2020 թվականի տարեկան հայտարարագրի՝ Ալեքսանյանի բանկային հաշվին առկա է եղել 613 դրամ, բայց դատավորն ունեցել է կանխիկ 4 մլն դրամ գումար: Այդ տարի նա 2000 դոլարի չափով փոխառություն է ստացել:

Նախորդ տարեվերջին արդեն դատավոր Ալեքսանյանը հայտարարագրել է կրիպտոարժույթ: Կանխիկ գումարի չափը կազմել է 2 մլն դրամ: Դատավորի աշխատավարձի չափն էլ է 2021 թվականին բարձրացել՝ կազմելով ամսական 593 հազար դրամ: Նշենք, որ դատավոր Ալեքսանյանը ծախսերի հայտարարագրի չի ներկայացրել:

Դատավորի հայրը՝ Հարություն Ալեքսանյանը, հայտարարագրել է, որ Եղվարդում ունի մեկ առանձնատուն եւ մեկ հողամաս: Նրա կանխիկ գումարը կազմել է 2 մլն դրամ, ամսական աշխատավարձը՝ 445 հազար դրամ:

Նշենք, որ հայր Ալեքսանյանը ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻՄ եւ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետն է: Նա եւս փոխառություններ, վարկեր ունի՝ 5.5 մլն դրամի չափով: Դատավորի մայրը՝ Լիլյա Աղայանը, 2020 թվականին ավտոմեքենա է գնել՝ Audi մակնիշի: Ունեցել է 2 մլն դրամի չափով կանխիկ գումար:

Ի դեպ, նշենք, որ դատավորի մայրը Եղվարդի թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենն է եւ ամսական ստացել է 249 հազար դրամ աշխատավարձ: Նա նույնպես փոխառություններ, վարկեր ունի՝ 7 մլն 200 հազար դրամի չափով:

ՆՅՈՒՆԷ ՀԱՍՏԱՐՈՇՈՒՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՎՈՐՈՒՄՆ ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻ Է

«Այս պահին օրակարգում նման հարց չունենք, եւ դրա համար ռեկտորների խորհուրդն այդ օրակարգով հարց չունի քննարկելու»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց ԵՊՀ ռեկտոր, ռեկտորների խորհրդի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը՝ անդրադառնալով բուհերի խոշորացման աղմուկի նախագծին, որը մինչեւ օրս ռեկտորների խորհրդում չի քննարկվել:

«Ես ընդհանուր այս հարցի վերաբերյալ մտածում եմ, որ Եվրոպայում խոշորացման են անցել շատ երկրներ, մասնավորապես՝ Ֆինլանդիան, Էստոնիան, եւ խոշորացման գործընթացն իր դրական արդյունքը տվեց: Իհարկե, ես մանրամասներին չեմ տիրապետում, բայց կարծում եմ, որ համալսարանների խոշորացումն անխուսափելի է»,- հավելեց մեր զրույցակիցը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 12-ից Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ուսանողները դժգոհում են՝ առանց իրենց ու դասախոսների կարծիքը հայտնելու կառավարությունը որոշել է միավորել ՀՀ պետական 3 բուհ՝ Երևանի մանկավարժական համալսարանը, Բյուրուսովի անվան լեզվաբանական ու Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

Ի դեպ, լիազոր մարմնի ղեկավար Վահրամ Դումանյանը հաստատել է՝ կառավարությունը 3 բուհերը միավորելու ծրագիր ունի. իսկ թե ինչու են մինչեւ օրս նախագիծը խնամքով թաքցրել, հայտնի չէ:

ԼԻՂՆ ԵՐԻՎԱՆԻՅԱՆ

ԱՆԿԱՆԻՒԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

«Անկանխիկ գործարքների մասին» ՀՀ օրենքը նոր խնդիրներ է առաջացրել մի շարք տնտեսավարողների մոտ, այլ կերպ ասած՝ Հայաստանում բիզնեսը դեռ չի հարմարվել այս կարգավորումներին: Շատերը նոր հնարքներ են մտածում օրենքը շրջանցելու համար, որպեսզի այս համակարգին անցումն իրենց համար վստահեցնի չլինի: Փոքր եւ միջին ձեռնարկատերերն արդեն մի քանի ամիս է, ինչ դժգոհում են՝ այս օրենքը բարդացրել է իրենց կյանքը: Տնտեսավարողների խոսքերով՝ բանկերը փոխանցումով գործարքների համար բարձր միջնորդավճար են պահանջում: Խոսքը 3 տոկոս միջնորդավճարի մասին է: Սա դեռ ամենը չէ:

Պարզվում է՝ ապրանք մատակարարող ընկերությունները նոր խնդիրներ ունեն, քանի որ տնտեսավարողները փոխանցումները կան ժամանակին չեն անում, ուշացնում են, կան էլ ընդհանրապես չեն անում: Նախկինում գումարը վճարում էին կանխիկ, այսինքն՝ գործում էր հետեւյալ կարգախոսը՝ գումարը կա, ապրանքը կա: Ստացվում է, որ այս օրենքի՝ ուժի մեջ մտնելուց հետո դեռ բանկերն են շահում եւ գերշահույթներ ստանում: Արդյոք կվերանայվեն միջնորդավճարների չափերը՝ ցույց կտա ժամանակը:

Ս. ՀԱՍՏԱՐՈՇՈՒՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԴԱՀԱՄԱՐ



Հայաստանում հոկտեմբերի 13-ից մեկնարկել է 10-օրյա մարդահամարը: Այն կավարտվի հոկտեմբերի 23-ին: Նկատենք, որ սա անկախ Հայաստանի արդեն երրորդ մարդահամարն է. նախորդ մարդահամարներն անցկացվել են 2001 և 2011 թվականներին:

Այս տարի համակցված մեթոդն առաջին անգամ է օգտագործվելու: Ազգության, քաղաքացիության, տարիքի հետ կապված հարցերը ստացվելու են բաց աղբյուրներից, ապա հարցեր են ուղղվելու նաև քաղաքացիներին: Առաջին անգամ է, որ այն անցկացվում է էլեկտրոնային եղանակով: Հարցերն ուղղված են լինելու տվյալ պահին տվյալ հասցեում բնակվող չափահաս անձին:

Ընդհանուր առմամբ ներառված է լինելու 39 հիմնական հարց և տնային տնտեսության բնակայանների վերաբերյալ եւս 5 հարց: Մարդահամարի արդյունքները պատրաստ կլինեն 1 տարուց:

Անդրադառնալով նախորդ տարիներին անցկացված մարդահամարներին: Համաձայն, 2011 թվականին անցկացված մարդահամարի տվյալների, վերջին տասը տարվա ընթացքում Հայաստանի առկա բնակչության թիվը պակասել էր 130 հազարով՝ կազմելով շուրջ 2 միլիոն 870 հազար մարդ: Նախորդ 2001 թվականի մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի հաշվեգրված բնակչության թիվը մոտ 3.5 միլիոն մարդ էր, իսկ հանրապետությունում առկա էին մոտ 3 միլիոնը:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԶՈՐԱԿՈՉԸ

Ձմեռային զորակոչը մեկնարկելու է 2023 թվականի հունվարի 9-ից մինչև հունվարի 31-ը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրումն իրականացվելու է 2023թ. փետրվարի 8-ից մինչև մարտի 31-ը ներառյալ:

Իսկ 2022 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2023 թվականի հունվարի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների համար է իրականացվելու շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՆԱԻՐԱ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ՓԱՍՏԱԳՐՎԵԼ Է

ՀՆԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ՝ ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Բնագավթված սարածմերում մշակութային ժառանգության դաժնամուրթյան ողեսական խորհրդի կողմից առայսօր փաստագրվել է աղացուցողական հիմնով վեր է հանվել Շուշում մնացած բանագրանային և մասնավոր հավաքածուներում ընդգրկված գեղարվեստի գործերի 1026 նմուշ: Այս մասին հոկտեմբերի 19-ին Ստեփանակերտի Պոլ Էլյուարի սոն Ֆրանկոֆոնիայի կենտրոնում Շուշի գեղարվեստի գործերի կորուսյալ հավաքածուների բնորոշման ընթացքում տեղեկացրեց Բնագավթված սարածմերում մշակութային ժառանգության դաժնամուրթյան ողեսական խորհրդի աշխատանքների համակարգող Մերգեյ Շահվերդյանը:

«Մեր առաջնահերթ խնդիրներից է բացահայտել բոլոր այն հավաքածուները, որոնք մնացել են բնագավթված տարածքներում: Բացի պետական թանգարաններից, բնագավթված տարածքներում կային նաև բազմաթիվ մասնավոր հավաքածուներ: Այսօրվա դրությամբ կարողացել ենք բացահայտել, որ Շուշիում է մնացել գեղարվեստի գործերի և թանգարանային 13 հավաքածու, այդ թվում՝ Կերպարվեստի պետական թանգարանում՝ 658 նմուշ, Շուշի քաղաքի քանդակի միջազգային պուրակում՝ 51, ինչպես նաև Արվեստի կենտրոնի ցուցասրահում՝ 66, «Նարեկացի» արվեստի միության հավաքածուից՝ 36, Սամվել Թավադյանի արվեստանոց-ցուցասրահում՝ 168 նմուշ, Արտակ Պողոսյանի՝ 20, Դավիթ Ավագիմյանի՝ 37 նմուշ», -մանրամասնեց Շահվերդյանը՝ հավելելով, որ Շուշիում են մնացել նաև բերդաքաղաքի պատմության պետական, Երկրաբանու-



թյան, Արցախյան գորգի /մասնակի/, Դրամագիտության թանգարանների, Պատկերասրահի և Վարդան Դուշմանի տուն-թանգարանի հավաքածուները: «Չենք կարող վստահ լինել, որ այս ցանկը վերջնական է, որովհետև հնարավոր է ի հայտ գան անձինք, ովքեր այնտեղ ինչ-որ հավաքածուներ ունենին: Ընթացքում այս ցանկը համալրման ենթակա է», -նշեց բանախոսը: Բնագավթված տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհրդի աշխատանքների համակարգողի խոսքով՝ ամենաթվաքանակը գործընթացն այդ հավաքածուներում պարունակվող մշակութային արժեքները բացահայտելն է: Շուշիում են մնացել ոչ միայն թանգարանային ու գեղարվեստի հավաքածուները, այլ նաև դրանց ցանկերը: «Բոլոր փաստաթղթերը, որոնք պիտի

պահվել թանգարանին, մնացել են Շուշիում, ուստի պարտավորված էինք նորից հավաքագրել: Այդ ցուցակներն ունեն նաև աղացուցողական հիմք, այսինքն՝ ցանկում ընդգրկված են լուսանկարներ կամ տեսանյութեր», - ընդգծեց Շահվերդյանը՝ ավելացնելով, որ Շուշիի որոշ թանգարանների գեղարվեստի կորուսյալ հավաքածուների ցուցանմուշների զգալի մասը տրամադրվել էր անհատների կողմից ժամանակավոր ցուցադրության համար: Շուշիի գեղարվեստի գործերի կորուսյալ հավաքածուների շնորհանդեսին ներկա էին նաև Բնագավթված տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության պետական խորհրդի նախագահ, Արցախի պետական նախարար Արտակ Բեգարյանը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Անահիտ Հակոբյանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԻՄՆ

ESG Sustainalytics ոլորտում առաջատար վերլուծական ընկերության փորձագետները ներկայացրել են երկրորդ կողմի կարծիքը «Յունիբանկ»-ի «Կանաչ» դաժնասոսնների թողարկման հայեցակարգի վերաբերյալ և հաստատել դրա համադասախանությունը միջազգային չափանիշներին և Green Bonds Principles 2021-ի դաժնանշաններին:

«Կանաչ» պարտատոմսերի թողարկումը, որոնց վաճառքից ստացված միջոցները ներդրվում են բնապահպանական նախագծերում, արագ թափ հավաքող համաշխարհային միտում է: «Յունիբանկ»-ն արդեն սկսել է իր զարգացման ռազմավարության մեջ ներառել բնապահպանական, սոցիալական և կառավարման պատասխանատվության (ESG) սկզբունքները և 2022 թվականի սեպտեմբերին ավարտել է «Յունիբանկ»-ի Green Bond Framework-ի մշակումը, ըստ որի՝ նախատեսվում է սկսել «Կանաչ» պարտատոմսերի թողարկումը: Ներգրավված ներդրումները կուղղվեն Հայաստանում էներգաարդյունավետության, գյուղատնտեսության մեջ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ջրային ռեսուրսների մաքրման և թափոնների կառավարման ոլորտներում նախագծերի ֆինանսավորմանը: Այդ նպատակով բանկում կստեղծվի «Կանաչ» պարտատոմսերի և կայուն զարգացման պարտատոմսերի կոմիտե:

2021 թվականին կայուն պարտատոմսերի համաշխարհային թողարկումը, որոն-



ցից միջոցներն ուղղվում են սոցիալական և բնապահպանական նպատակներին, հասել է 859 միլիարդ դոլարի, ինչը 1,5 անգամ ավելի է, քան 2020 թվականին: Թողարկման ծավալի կեսից ավելին բաժին է ընկել «Կանաչ» պարտատոմսերին: Միջոցների 80%-ն ուղղվել է վերականգնվող էներգիայի, կայուն շինարարության և ցածր ածխածնային տրանսպորտի զարգացմանը:

«Յունիբանկ»-ը լիովին աջակցում է պատասխանատու ներդրումների միտմանը և ողջունում բնապահպանական խնդիրների նկատմամբ աճող ուշադրությունն ու շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարությունը: «Յունիբանկ»-ն արդեն ներդրել է բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ESMS), որը մշակվել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի ղեկավարությամբ: «Յունի-

բանկ»-ի տվյալների մշակման կենտրոնն ամբողջությամբ սնուցվում է արեւային էներգիայով:

«Կանաչ» պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցները կուղղվեն բնապահպանական նախագծերի իրականացմանը, ինչը կնպաստի ածխածնային ցածր, կլիմայակայուն և էկոլոգիապես մաքուր տնտեսության անցմանը:

Ըստ Sustainalytics-ի ամփոփագրի՝ «Յունիբանկ»-ի «Կանաչ» պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հայեցակարգն արդյունավետ է և արժանահավատ: Sustainalytics-ն ակնկալում է, որ «Յունիբանկ»-ի կողմից ֆինանսավորվող բնապահպանական ծրագրերը կբարելավեն շրջակա միջավայրի վիճակը և կնպաստեն Հայաստանում «Կանաչ» էներգիայի զարգացմանը՝ հիմնվելով վերականգնվող աղբյուրների օգտագործման վրա:

«Օղովուրդ» օրաթերթում և ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար գանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԺԱՄԱՆԱԿԻՆ ԸՆԴՈՒՄԸ»

# ՆՈՐ ՑՈՒՑԱՂԱՆԴԵՄ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

«Ժամանակին ընդառաջ վերականգնումը Հայաստանում» խորագրով ցուցահանդեսում ներառվել են իրեր, որոնք վերականգնել են հայ մասնագետները: Ներկայացված են բրոնզ, սև եւ կարմիր խեցեղեն, ճենադակի, գործվածք, թուղթ, մագաղաթ, յուղանկար եւ այլն: Լայն է նաեւ ժամանակային եւ աշխարհագրական ընդգրկվածությունը՝ վաղ բրոնզեդարից մինչեւ 20-րդ դարի կեսեր, իսկ ստեղծման եւ դեղման աշխարհագրությունը՝ Կոստանդնուպոլիս, Մադրաս, Ռուսաստան, Նոր Զուլա, Սիրիա, դասական Հայաստան, Հայաստանի Հանրապետություն:


Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 18-ին «Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամում:

Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղեւոնդյանը ցուցահանդեսը եզակի համարեց՝ նշելով, որ այն մեկ հարկի տակ է համախմբել ութ մշակութային հաստատությունների:

«Ներկայացնում ենք վերականգնողի գործը տարբեր դրսեւորումներով եւ տարբեր բնագավառներում: Ցուցադրված են վերականգնված գրքեր, ձեռագրեր, ասեղնագործ վարագույրներ, գորգեր, գեղանկարներ, գրաֆիկա, հնագիտական առարկաներ: Այցելուները կարող են տեսնել, թե ցուցանմուշն ինչ վիճակում է եղել առաջ եւ ինչչափսին է դարձել վերականգնվելուց հետո»,-մանրամասնեց նա:

Մատենադարանի տնօրենի խոսքով՝ այնպես, ինչպես մարդն իր կյանքն է վստահում բժշկին, անչափ բարձր գնահատում նրա աշխատանքը, նույնքան էլ բարձր պետք է գնահատել այն մարդկանց գործը, որոնց վստահում ենք մեր մշակութային ժառանգությունը, որը մեր ինքնությունն ու էությունն է:

Տեր-Ղեւոնդյանը վստահեցրեց, որ ցուցադրությունը միայն ճանաչողական նպատակ չի հետապնդում. այն միտված է փոխելու հանրության, կառավարության վերաբերմունքն ու ավելի լրջացնելու:



լու այն վերականգնողի աշխատանքի հանդեպ:

Ծրագրի ղեկավար Գայանե Էլիազյանն էլ կարծում է՝ ցուցադրության աշխատանքային կարգախոսը պետք է լինի «Մենք կանք եւ պետք է լինենք»: Նրա հավաստիացմամբ՝ վերականգնողներն այն օղակն են, որ կապում է անցյալն ապագայի հետ: «Ցուցահանդեսը շատ փոքր է, եւ թանգարաններում բավականին մեծ նյութ կա, որն արժե ցուցադրել: Սա մեր առաջին փորձն է, որի միջոցով ուզում ենք հանրությանը մասնակից դարձնել այն երկխոսությանը, որը տեղի է ունենում վերականգնողի եւ վերականգնվող նյութի միջև»,-նշեց Էլիազյանը:

Ցուցահանդեսի համադրող Արա Յայթյանը փորձել է անել հնարավորը, որ սովորական այցելուն առնչվի վերականգնողի հետ, առնչվի տեսաֆիլմի միջոցով, ծանոթանա՝ տեսնելով նրա խոհանոցը եւ իրերը մինչ վերականգնումը եւ հետո: «Գրեթե 5000 տարվա մշակութային կտրվածք է ներկայացված: Երբեմն միտումնավոր փորձել եմ զուգահեռներ տանել տարբեր դարաշրջանների միջև՝ տեսնելու, թե որոնք են այն ընդհանուր գծերը, որոնք կարող են Մեծամորը միացնել վաղ միջնադարին, վաղ միջնադարը՝ ուշ միջնադարին, եւ այլն: Մասնագետների համար ցուցադրությունը տարբեր դարաշրջանների տարբեր գեղագիտությունները համեմատելու հրաշալի հնարավորություն է»,-նշեց Արա Յայթյանը:

Նմուշները Մատենադարանի, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի, Պահպանության ծառայության, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի ազգային արխիվի, Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանի պահոցներից են:

Ցուցահանդեսը կյանքի է կոչվել ՀՀ կրթության, գիտության, մշակութային եւ սպորտի նախարարության «Թանգարանային ծրագրեր եւ միջոցառումներ» անվանակարգի դրամաշնորհային ծրագրով: Այն գործելու է մինչեւ 2023 թվականի հունիսի 9-ը:

ԼՈՒՐԵՐ

## ՆՈՐ ՄԵՐԻԱԿ

Նոր M: Son of the Century («Մ. Դարի որդին») հեռուստատեսիվում ֆաշիստ առաջնորդ Բենիտո Մուսոլինիին կմարմավորի իտալացի դերասան Լուկա Մարինելլին («Մարտին Էդեն», «Անմահ գվարդիան»): Նախագիծը կղեկավարի բրիտանացի Ջո Ռայթը:

8 դրվագներից կազմված նախագիծը կպատմի 1919-ից 1925 թվականների մասին՝ Ֆաշիստական կուսակցության ծնունդից մինչեւ Իտալիայում իշխանության գալթումը. այն հիմնված է Անտոնիո Սկուրատիի՝ 2018 թվականին լույս տեսած համանուն վեպի վրա:

Սցենարի հեղինակներն են Ստեֆանո Բիգեսն ու Դավիդե Սերինյոլը: Հեռուստատեսիվի արտադրական փուլի աշխատանքները կսկսվեն առաջիկա շաբաթների ընթացքում Հռոմում:

Մարինելլին վերջերս ավարտել է «Անմահ գվարդիան»-ում իր նկարահանումները: Նա նաեւ մարմավորել է «Ութ լեռներ» դրամայի գլխավոր հերոսին: Ֆիլմը 2022 թվականին «Կաննի միջազգային կինոփառատնում» արժանացել է «ժյուրիի մրցանակի»:

## ՄՊԱՌՆՈՒՄ Ե ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ

Անգլիայի փոխշեմպիոն «Լիվերպուլ» գերմանացի գլխավոր մարզիչ Յուրգեն Կլոպը մեկնաբանել է Պրեմիեր լիգայի 11-րդ տուրում «Մանչեսթեր Սիթիի» դեմ հանդիպման ժամանակ իր ստացած կարմիր քարտի դրվագը: «Լիվերպուլն» այդ խաղում առավելության էր հասել նվազագույն հաշվով:

Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիան կարգապահական վարույթ է սկսել: Կլոպին սպառնում է որակազրկում մի քանի խաղով:

«Իմ առաջին կարմիր քարտն էր Անգլիայում, իմ մեղքն է: Ոչ մի արդարացում չկա, ամեն ինչ ակնհայտ էր: Նորմալ է, որ մրցավարը պատժեց: Ինձ հեռացնելը լավ որոշում էր: Բոլորս էլ մարդ ենք, երբեմն իրավիճակներին արձագանքում ենք շատ հուզական: Դժվար է զսպել հույզերը, երբ լարվածությունը աճում է խաղի ամեն րոպեին, բայց այդ դրվագում Գվարդիոլան էլ համաձայն էր, որ Սալահի նկատմամբ խախտում է եղել»,- ասել է Կլոպը:

Անգլիայի առաջնության հաջորդ տուրում «Լիվերպուլը» հոկտեմբերի 19-ին կընդունի «Վեստ Հեմին»:

## ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Ե ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Մալխաս Ամոյանը սոցիալական ցանցերում արած գրառումով մեկնաբանել է հաղթանակը Իսպանիայի Պոնտեբերա քաղաքում ընթացող հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի մինչեւ 23 տարեկանների առաջնությունում:

«Անցել ենք դժվար ճանապարհ եւ դեռ պետք է անցնենք: Շնորհակալ եմ բոլորիդ: Հաղթանակս նվիրում եմ հայ եւ եզդի ազգին: Այս հաղթանակը բոլորինս է»,- գրել է Մալխաս Ամոյանը:

23-ամյա ըմբիշը 77 կգ քաշայինների եզրափակիչում 7:2 հաշվով պարտության էր մատնել մոլդովացի Ալեքսանդրին Գուտուլին:

ԳԱՂՏՆԻ ՆԱԽԱԳԻԾ

# ՇԱՂԵՐԻ ԱԿՆՔԱՅՑ ԲԱԽՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին հայցնի դարձավ, որ ԿԳՄՍ նախարարությունում գաղտնի նախագիծ է օրջանառվել, որով նախատեսվում է միավորել Ֆիզիկական կուլտուրայի հայկական դեպարտմենտը եւ Բրյուսովի անվան համալսարանը Խաչատուր Աբովյանի հայկական դեպարտմենտի մանկավարժական համալսարանի հետ:

Վերամիավորումից հետո այն կկոչվի Խաչատուր Աբովյանի անվան կրթական գիտությունների ինստիտուտ:

Սակայն ուշագրավն այն է, որ օրեր շարունակ հազարավոր ուսանողների դասադուլի պատճառ հանդիսացող այս նախագծին առարկայական որեւէ գնահատական եւ բացատրություն մինչ օրս Կառավարությունից չեն տվել, միայն օրերս է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը անդրադարձել է եւ ասել, թե զարմացած է

Բրյուսովի ձեկտորի այն հայտարարությունից, որ իր համար եղել է անակնկալ բուհերի միավորման հարցը, եւ պայքարը համարել է մի երկու ձեկտորի հաստիքի կրճատման հարց ընդամենը:

Իհարկե, տրամաբանությունը հուշում է, որ պետք է գուցե այս երեք բուհերի հենքի վրա ստեղծվեր Նոր բուհ՝ լուրջ ռազմավարությամբ, մրցունակ կրթական ծրագրով, այլ ոչ թե այս բոլոր համալսարանները միանային, ուսանողների պնդմամբ, «վատված աշխատող» Մանկավարժական համալսարանին, քանի որ փոխնախարարի մտերմուհին է ձեկտորը: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ այս նախագծի փաստացի հեղինակը ԿԳՄՍ փոխնախարար ժամանա Անդրեասյանն է, որը միաժամանակ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, ինչի իրավունքը չունի: Շահերի ակնհայտ բախում է:

Բանն այն է, որ ժամանա Անդրեասյանը՝ որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ, պարտավորվածություն ունի Մանկավարժական համալսարանի զարգացումն ապահովել: Որպես փոխնախարար՝ նա պարտավոր է հայաստանյան բոլոր բուհերի զարգացման համար հավասար հնարավորություններ ստեղծել, հետեւաբար գործ ունենք ակնհայտ շահերի բախման օրինակի հետ:

Մանկավարժական համալսարանի ձեկտոր Սրբուհի Գեղորգյանը ժամանա Անդրեասյանի մտերմն է, եւ այս միավորման արդյունքում փոխնախարարն այնպես է նախատեսել, որ Նոր ձեկտորի ընտրություն չլինի, այսինքն՝ ժամանա Անդրեասյանի մտերմուհին կդառնա Նոր միավորված համալսարանի ձեկտոր:

ԼԻՂԱ ԵՐԻՎԱՆՈՅԱԼ

● Հոկտեմբերի 25-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում տեղի կունենա ««Ջարթոնք» Վահան Տերյան» պոեզիայի երեկոն: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՈՂՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ դեղի ԵՍՍՄ եւ այլ երկրներ բուսական ծագման մթերքի արտահանման համար:

Լեռնիկ Յավրյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ արտահանվող թարմ պտուղ-բանջարեղենի խմբաքանակի մաքսային ձեւակերպումների համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ փաստաթղթերը՝

1. արտահանման հաշիվ-ապրանքագիր, պայմանագիր.

արտահանման հաշիվ-ապրանքագրում նշվում են ապրանքն արտահանողի եւ ստացողի (ԵՍՍՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անվանումները, հասցեները, ԶՎԶԶ-ն, ապրանքի նկարագիրը, քանակը, քաշը, արժեքը.

2. տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը - CMR

3. ապրանքների ձեռքբերման փաստաթուղթ, բացակայության դեպքում փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը.

4. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրվող անվտանգության կամ ֆիտոսանիտարական հավաստագիր, որը խմբաքանակի վերը նշված փաթեթավորման եւ մակնշման պահանջների ապահովման եւ կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ լինելու դեպքում տրամադրվում է արագացված ընթացակարգով՝ 20 րոպետում.

5. խմբաքանակի առետրային փաստաթղթերից որեւէ մեկի վրա անհրաժեշտ է նշել ՕԻձԱԾԾ ԱձձձՅԵԵՔԵՔԵԻՁԻ յԵՐԻՆԵ՝ՅՁԵԻՁԻ ՔԻՐՇԱ՝ հաստատված հայտարարատուի (մատակարար կամ փոխադրող) կողմից.

6. ապրանք ստացող կողմը պարտադիր պետք է լինի ԵՍՍՄ անդամ երկրի ռեզիդենտ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ համաձայն ԵՍՍՄ անդամ ներմուծող երկրի կողմից ներկայացված պահանջի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Այլ երկրներ արտահանելիս ներմուծող երկրի պահանջի դեպքում անհրաժեշտ է ունենալ նաեւ արտադրանքի ծագման երկրի հավաստագիր, որը տրամադրվում է ՀՀ առետրաարդյունաբերական պալատի կողմից առանց փորձաքննության, դիմումի ստացման օրվանից 1-օրյա ժամկետում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վերադարձնել կամ վերածեակերպել սխալ կամ ավել վճարված գումարները:

Նվարդ Օհանյան (56 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերածեակերպման նպատակով կից դիմումի ձեռով կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը: Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա որպես վճարումը հաստատող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանձնարարագրի հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը: Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի գանձապետական հաշիվներ բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը:

Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները /տերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Վերածեակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը: Դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերածեակերպում/ կատարված լինելու մասին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Երեւն՝ հոկտեմբերի 19-ին՝ ժամը 13:25-ի սահմաններում, Երեւանի բնակիչ 18-ամյա Նարեկ Ա.Ն իր վարած Yamaha մակնիշի մոպեդով Աճառյան փողոցում վարերթի է ենթարկել փողոցը չթույլատրելի հատվածն անցնող Երեւանի բնակիչ 60-ամյա Երվանդ Ռ.Ֆին: Տուժածին ցուցաբերվել է առաջին օգնություն, եւ նա տեղափոխվել է հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդորդադառնանք ձեր բարձրագրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a promotional code.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 19.10.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: